ՀՀ ԿԳՄՍՆ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի» առարկայի դասավանդման ընթացքում

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Աննա Բենիամինյան

Դպրոց՝ Վաղաշենի միջնակարգ դպրոց

ՄԱՐՏՈՒՆԻ 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն… 3

Գլուխ. 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: ՍՈՎՈՐՈՂԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁևԱՎՈՐՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ…4

1. 1 Դպրոցականների վարքի կանոններն ու աշխարհայացքի ձևավորումը …4

1.2. Արժեքի ձևավորման մոդելները և դաստիարակության ձևերը …7

Գլուխ 2: Հետազոտական – փորձարարական դասեր … 10

Հետազոտական – փորձարարական դաս 1 … 10

Հետազոտական – փորձարարական դաս 2 … 14

Եզրակացություն …18

Գրականության ցանկ …19

Հավելվածներ ….20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է. միասնական կրթական դաշտում դպրոցականների կայուն, համամարդկային և ազգային արժեքային համակարգի ձևավորումը, որի պատասխանատուն հստակ մանկավարժական մտածելակերպով դպրոցի ուսուցիչն է, նա պետք է այդ արժեքների կրողը լինի և ձևավորողը:

Հայկական միջավայրում արժեքապահպան մի շարք գործոններ կան՝ ընտանիք՝ ավանդական դաստիարակությունով, դպրոցը՝ մանկավարժի օգնությամբ, հասարակությունը՝ իր սովորույթներով:Ամենամեծ գովեստն ուսուցչի համար այն է, երբ գովում են իր աշակերտին:

Հետազատական աշխատանքի նպատակն է՝ սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի» առարկայի դասավանդման ընթացքում: Ուսուցչի դերը շատ կարևոր աշակերտի ձևավորման, կայացման և գիտելիքների ձեռքբերման գործում: Ուսուցչի դերը միայն դասարանում աշակերտների առջևկանգնելը և դաս տալու մեջ չէ: Ուսուցիչը հասկանում է, որ բացի աշակերտին գիտելիք տալուց նա նաև պատասխանատու է աշակերտի բարեհաջող անցած օրվա համար, և որակյալ կրթության համար:Ժամանակակից մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը, որը կրթության անքակտելի բաղադրիչն է: Ժամանակակից դպրոցի ուսուցիչը պետք է իր աշխատանքն իրականացնի՝ հիմնվելով սովորողների անընդհատ փոփոխվող և զարգացող անհատական առանձահատկությունների փաստերի վրա, որպեսզի կարողանա իրականացնել մանկավարժական արդյունավետ գործընթաց՝ որպես նախապայման դիտարկելով սովորողի տարիքային առանձնահատկություններին համապատասխան ազգային արժեքային կողմնորոշման ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև ապահովի որակյալ կրթություն:

ԳԼՈՒԽ. 1 ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՍՈՎՈՐՈՂԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1. Դպրոցականների վարքի կանոններն ու աշխարհայացքի ձևավորումը

Ուսումնական հաստատությունում դպրոցականների կարգապահությունն ապահովվում է օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով: Մեջբերում կատարենք հայաստանյան դպրոցներից մեկի մշակած վարքի կանոններից.

- Աշակերտը դպրոց է ներկայանում անհրաժեշտ դասագրքերով և գրենական իրերով: Դասի սկզբին սեղանին պետք է դրված լինի օրագիրը, տվյալ դասի դասագիրքը, գրենական իրերը:
- Զանգը հնչելուն պես աշակերտները մտնում են դասարան:
- Եթե աշակերտը հարգելի պատճառով ուշացել է դասից, նրան անհրաժեշտ է թակել դուռը, ներողություն խնդրել, ուշանալու պատճառը հայտնել, եթե այդ պահանջում է ուսուցիչը, լուռ, չխանգարելով դասի ընթացքը, նստել իր տեղում և ներգրավվել աշխատանքին:
- Աշակերտն ակտիվորեն մասնակցում է դասերին, հետևում է նրա ընթացքին, պատասխանում է ուսուցչի հարցերին: Իր պատրաստվածությունը ցուցադրում է ձեռք բարձրացնելով:
- Գրավոր աշխատանքների կատարման ընթացքում աշակերտը կատարում է ուսուցչի պահանջները, գրում է անհրաժեշտ տետրում, ձևակերպում է առաջադրանքները համաձայն ցուցմունքի, հանձնում է աշխատանքը ժամանակին:
- Լաբարատոր, պրակտիկ աշխատանքների, ցուցադրվող փորձերի ժամանակ անհրաժեշտ է հետևել անվտանգության տեխնիկայի կանոններին:
- Տնային առաջադրանքները անհրաժեշտ է գրի առնել օրագրում, կամ աշխատանքային տետրում: Չի կարելի դասից դուրս գալ չպարզաբանելով, թե ինչ է հանձնարարված որպես տնային աշխատանք:

- Դպրոցում և դպրոցից դուրս մեր դպրոցի աշակերտը օրինակելի պետք է լինի, դաստիարակվածության, քաղաքավարության, բարյացկամության, մեծերի, փոքրերի և իր հասակակիցների նկատմամբ իր հարգալից:

Կրտսեր դպրոցական տարիքում վարքի կանոներինհետևելուն, դրանցով առաջնորդվելուն զուգահեռ ձևավորվում է նաև երեխայի աշխարհայացքը:

Աշխարհայացքի տարրերը աշխարհի հիմքի և բովանդակության, շարժման, աշխարհի ճանաչողության, մարդու էության, կյանքի իմաստի, իրականության մեջ մարդու հոգեկանի տեղի ու դերի և այլ հարցերի վերաբերյալ պատկերացումներն են: Երեխայի աշխարհայացքը ինտեգրում է մարդու արժեքային, բարոյական և գեղագիտական ցուցանիշները և որոշիչ գործոն է անհատի զարգացման և ձևավորման համար:

Աշխարհայացքը մարդ-աշխարհ հարաբերությունների շրջանակներում աշխարհի մասին և այդ աշխարհում մարդու տեղի ու դերի մասին տեսական-քննադատական առավել ընդհանուր հայացքների համակարգ է:[8: 496]

Տարերայնորեն կամ նպատակադիր կերպով կրտսեր դպրոցականի աշխարհայացքը ձևավորվում է որոշակի գիտակցական մակարդակ ունեցող յուրաքանչյուր անհատի մոտ և կազմում է նրա հոգևոր աշխարհի անհրաժեշտ կողմերից մեկը, նրա գործունեության հիմնական ուղղությունը: Աշխարհայացք հասկացության ժամանակակից ընկալման հիմքում ընկած են նրա կառուցվածքի հետևյալ հասկացությունները (բաղադրիչները).

- ընդհանրացված գիտելիքներ,
- հայացքներ (սուբյեկտիվ է),
- համոզմունքներ (իմաստավորված արժեք է),
- իդեալներ (մտային պատկերացումների արդյունք է):

Աշխարհայացքի ձևավորման բովանդակային բաղադրիչներն են աշխարհայացքային գիտելիքները և գաղափարները, որոնցով պայմանավորված է աշխարհընկալումը: Աշխարհայացքի ձևավորումը սկսվում է շատ վաղ՝ դեռևս նախադպրոցական շրջանից. այն իրականացվում է ուսուցումն ու դաստիարակությունը պլանավորված, նպատակասլաց գործունեությամբ

զուգակցելու պայմաններում: Բնության մասին գիտելիքները աշխարհայացքի ձևավորման կարևոր բաղադրիչ են: Աշակերտների աշխարհայացքի ձևավորման գործում առաջնային են բնության կենդանի և անկենդան համակարգերի զարգացման փոխհարաբերության և կապի բացահայտման խնդիրները:

Մարդ և բնություն փոխհարաբերությանն են անդրադարձել մի շարք գիտնականներ: Լ. Թ. Ասատրյանի մոտեցման համաձայն, «Էկոլոգիական աշխարհայացքի զարգացման գործընթացը ենթադրում է մեր հոգևոր կյանքի խորքային հիմնավորումների՝ բնագիտական հարացույցի, գիտության մեթոդաբանական սկզբունքների, բնագիտական կրթության մեթոդաբանության վերանայում ուսուցման սուբյեկտի ենթագիտակցության վրա ներգործելու ճանապարհով»:Աշխարհայացքը մարդու սուբյեկտիվ վերաբերմունքն է աշխարհի նկատմամբ, որը ներառում է գիտելիքներ, գաղափարներ, հայացքներ, համոզմունքներ և դիտվում որպես անհատի սոցիալական գնահատական:

Եթե գիտելիքները, փաստերը, գաղափարները աշակերտներին մատուցվում և նրանց կողմից յուրացվում են առանց գիտական հիմնավորման, ընդհանրացման և աշխարհայացքային գնահատման, ապա ձևավորվում են ակադեմիական, դոգմատիկ հայացքներ:Աշակերտի աշխարհայացքի ձևավորվածության արդյունքը գնահատվում է խոր և հիմնավոր գիտելիքներով, իրականության դիալեկտիկական գնահատմամբ, սոցիալական ակտիվությամբ, կյանքում իր տեղը ճանաչելով, ճիշտ որոշումներ կայացնելու կարողությամբ, գիտելիքները գործնականում կիրառելու հմտությամբ, արժեքային համակարգերի գնահատումով, ինքնուրույնությամբ, բնության և հասարակության զարգացման ճիշտ գնահատումով, հասարակական մտածողությամբ, բնության վրա անթրոպոգեն ազդեցության կանխատեսումով և գնահատումով: Կրտսեր դպրոցական տարիքում աշխարհայացքի գործառույթներն են.

- տեղեկատվական - արտացոլող,
- կողմնորոշա-կարգավորող,
- արժեքային,
- դաստիարակող և զարգացնող,
- կանխորոշող,

- կազմակերպող և այլն:

Աշխարհայացքի ձևավորման համար կարևոր են մեթոդաբանական հետևյալ սկզբունքները.

- սովորողների տարիքային առանձնահատկությունների սկզբունքը, ինչը հիմնված է հոգեբանական, ֆիզիոլոգիական, բանականության և այլ անհատական առանձնահատկությունների վրա,
- համակարգվածության սկզբունքը,
- գիտականության սկզբունքը, ինչի հիմքում բնական երևույթների բացահայտումն է,
- կրթության, դաստիարակության և անհատական զարգացման միասնականության սկզբունքը,
- միջառարկայական կապերի, համակարգվածության և անընդհատության սկզբունքի կիրառումը ուսուցման գործընթացում:

Ամփոփելով նշենք, որ կրտսեր դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա, անկախ իր բնավորության բնութագրիչներից, կարող է հաջողությամբ ձեռք բերել գիտելիքներ, լավ կրթություն ստանալու համար: Այնուամենայնիվ, մինչև ուսուցումը և կրթությունը կազմակերպելը, պետք է հիշել, որ կախված բնավորության բնութագրերից, երեխաների վարքագիծը կարող է տարբեր լինել: Ուսուցիչը չպետք է դնի իր առջև խնդիր փոխելու համար աշակերտների բնավորությունը: Նախ, սա գործնականում անհնար է, քանի որ նյարդային համակարգի տիպաբանական հատկությունների փոխակերպման գործընթացը անցնում է շատ դանդաղ, և երկրորդ, իմաստ չունի: [7:49]

1.2. ԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Արժեքը, աշխարհի յուրահատուկ գաղափարախոսություններից է, որը հիմնականում ձևավորվում է ոչ միայն գրքերից և ուսումնառության արդյունքում, այլ մեծամասամբ օրինակով և դեռ վաղ մանկության տարիքից: Մենք բոլորս երեխաներին դեռ մանկուց սովորեցնում ենք պահելաձև, մի շարք <կարելիներ և չի կարելիներ> և հենց այս ամենի միջոցով էլ փոխանցում ենք նրանց արժեքների մի

բույլ, նույնիսկ չգիտակցելով այդ մասին։ Արժեքները ձևավորվում են կենսափորձի հիման վրա, որոնք ձևավորվում են ըստ մեր շրջապատի, ապրելու երկրից, հասարակության վարքերից ու բարքերից։ Մարդու արժեհամակարգի հետ սերտ կապված է մշակույթը։ Մշակույթի և մշակութային իրադարձությունների ու դրանց պահպանման հետ մեզ փոխանցվում են արժեքներ, որոնք էլ ամբողջացնում են մեր արժեհամակարգը՝ դարձնելով այն ավելի կայուն արտաքին <վտանգների> հանդեպ [2:25]։

Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է։ Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են հավատն ու սերը։ Աշակերտներին սովորեցնում ենք սիրել դասընկերներին, հետո սիրել դպրոցը, իր տունը, քաղաքը, փողոցը, հայրենիքը և այլն։ Սերը դեպ դասընկեր, դա այն առաջին քայլն է, երբ մարդը սովորում է հարգել, գնահատել դիմացինին և լինել ուշադիր շրջապատի մարդկանց նկատմամբ։ Սեր դեպի դպրոց, տուն, փողոց ու քաղաք այլ է, այս դեպքում սովորեցնում ենք սիրել այն միջավայրը որտեղ ապրում և ստեղծագործում ենք։

Ավագ դասարաններում ուսուցիչը հայրենասիրության դրսևորման և ամրապնդման համար հանձնարարում է ընտրել խնդիր, որ առկա է հայրենիքում և առաջարկել դրա լուծումները կամ հայրենիքի զարգացմանը նպաստող ուղիներ առաջարկել։ Այստեղ ավելի նպատակահարմար է քննարկումը։ Սակայն կրտսեր դպրոցական տարիքում երեխաներին առաջարկում ենք մի փոքր այլ տիպի հանձնարարություն, օրինակ նկարել հայրենիքը, պատմել հայրենիքի մասին իրենց պատկերացումները։ [2:25] Որպես մեթոդ պատմելն այս դեպքում առավել նպատակարմար է։ Սերմանելով հայրենասիրություն՝ երեխան սովորում է պայքարել, հարգել իրենը, իմանալ իր պատմությունը և ճանաչել ինքն իրեն։

Հայրենիքի դերը և նշանակությունը պետք է սերմանել դեռ փոքրուց՝ կրտսեր դպրոցից։ Տարրական դասարանի աշակերտները դժվար են ընկալում հայրենիք, ինչ է այն և ինչի համար, քանի որ հայրենիքը մեծ հասկացություն է, չունի պատեր ու սահմաններ։[2:27] Ուսուցիչը օգնում է երեխաներին ընկալել այդ մեծ հասկացությունը համեմատելով այն սեփական տան, քաղաքի, դպրոցի, շենքի, փողոցի հետ։

Մեկ այլ արժեք է աշխատասիրությունը, որը պետք է սերմանել աշակերտների գիտակցության մեջ։ Բացատրել և օրինակներով ցույց տալ որ աշխատելով մարդ կհասնի նույնիսկ անհրաժեշտ արդյունքների։ Ուսուցիչը շատ հաճախ կարող է խրախուսել և մոտիվացնել աշխատասեր աշակերտներին՝ օրինակ ցույց տալով մյուսներին

Բնականաբար հարկավոր չէ առանձին դասաժամ ունենալ հատուկ արժեքների կամ արժեհամակարգի ձևավորման համար։ Հարկավոր է յուրաքանչյուր նոր նյութ բացատրելով՝ աշակերտներին սովորեցնել արժեքներ, տարբերակել դրանք, ընտրելով առավել հարմար մեթոդը։ Այսպես օրինակ խոսեցինք հայրենասիրության մասին, որպես օրինակ բերենք հետևյալը։

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է։ Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները՝ վրա է հասնում ոգու սովը։Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին։

ԳԼՈՒԽ 2: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ – ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ – ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1: Սուրեն Վարդևանյան « Օջախի հիմքը»

Ուսուցիչ՝ Աննա Բենիամինյան

Ամսաթիվը՝ 18.04.2022 թ.

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ 4-րդ

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Սուրեն Վարդևանյան « Օջախի հիմքը»

Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը՝

- *ընդլայնել և խորացնել հայ գրողների մասին գիտելիքներ*
- *զարգացնել օջախի մասին ունեցած տեղեկությունները*
- *ձևավորել սեր դեպի հայ գրողների ստեղծագործությունները*
- *մեծացնել հետաքրքրությունն առարկայի նկատմամբ:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ✓ Կրթական՝ հոմանիշ բառերի ամրապնդում,
- ✓ Զարգացնող՝ բառապաշարի հարստացում՝ օջախ բառի իմաստի բացատրություն,
- ✓ Դաստիարակչական՝ սովորողների մոտ ձևավորել նպատակասլացություն, ջանասիրություն, աշխատասիրությունՍովորողի **ուսումնական ակնկալիքները՝**
- ✓ **Գիտենալ***գրողի կյանքի մասին (հղում), ծանոթանալ որոշ ստեղծագործություններին*

- ✓ **Կարողանալ***դասը ընթերցել*

Դասի կահավորումը՝ *գրատախտակ, դասագիրք, տետր*

ԴԱՍԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- ➢ ԳՈՒՍ՝ գիտեմ ուզում եմ սովորեմ սովորել եմ
- ➢ Մտագրոհ
- ➢ Կշռադատում

ԳՈՒՍ՝ գիտեմ ուզում եմ սովորեմ սովորել եմ մեթոդը օգտագործելու ենք դասի ամբողջ տևողության ընթացքում 3 փուլերը կիրառելով:

Կշռադատում մեթոդի օգնությամբ կպարզենք սովորողները, որ հատցածն են հավանել և արժևորել:

Մտագրոհ մեթոդը նոր դասի բացատրելու ժամանակ կօգնի հասկանալ սովորողների գիտելիքները նոր թեմայի շուրջ, որը դեռ չեն ուսումնասիրել:

Դասիընթացքը.

1. Բանավորհարցում
2. Նորնյութիհաղորդում
3. Դասիամփոփում և գնահատում
4. Տնայինաշխատանքիհանձնարարում

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ

Դասը սկսում ենք նախորդ դասի հարցում- կրկնությամբ կապելով նոր դասի հետ:

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ- ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈՎ

Դասն սկսել Սուրեն Վարդևանյանի թևավոր խոսքով. << Մարդիկ երջանիկ են իրենց ընտանիքում: Երբևէ մտածե՞լ ես, թե ինչու…>>

Լսել աշակերտների կարծիքներն այդ մտքի վերաբերյալ և ասել, թե ինչ է ընտանիքը - օջախը իրենց համար:

Զրույց ծավալել հետևյալ հարցերի միջոցով .

-Ո՞ր թեմատիկ խումբն ենք ուսումնասիրում:

-Ի՞նչ դասանյութեր ենք անցել այս թեմատիկ խմբի ուսումնասիրության ընթացքում:

-Ի՞նչի մասին են այդ դասանյութերը:

Ամբողջացնել աշակերտների արտահայտած կարծիքներն ու մտքերը:

Իմաստի ընկալում

Կարդալ վերնագիրը՝ <<Օջախի հիմքը>> և աշակերտներին հարցնել.
-Ի՞նչ եք հասկանում օջախ ասելով

Լսել մեկնաբանությունները, տալ օջախ բառի բացատրությունը:

Դիտել նկարներ տան և կրակարանի/բուխարի/ ՝ հին հայկական ժամանակներից մինչև մեր օրեր:**Հավելված 1**

3.ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դասն ամփոփվում է հարցերի միջոցով.

1. Ո՞վ է Ս. Վարդևանյանը

2. Ի՞նչ է նշանակում «օջախ» բառը:

3.Որո՞նք են հետևյալ բառերի և բառակապակցությունների հոմանիշները՝ տանտիկին, առավոտ, հյուրն Աստծունն է, վերադառնալ, բախտը դուռը գալ,

4. Նշիր թե որ՞ տարբերակը կընտրեիր դու և ինչու՞:

Մատյանում գնահատել 3-4 աշակերտի՝ հիմնավորելով նշանակած գնահատականը:

Տնայինաշխատանքիհանձնարարում

ԴԱՍԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՁԵԱԹՈՒՂԹ

(Անհրաժեշտ է լրացնել դասից հետո)

Սուրեն Վարդևանյան « Օջախի հիմքը»

Ի՞նչը լավ ստացվեց: Հետազոտական – փորձարարական դասերի ընթացքում ամեն ինչ լավ է ստացվում, բացթողումներ չեն լինում, շնորհիվ նախապես պլանավորած ծրագրի: Թեմայի ամրապնդումը և նոր գիտելիքների տրամադրումը հետաքրքրություն է առաջացնում նոր դասի շուրջ:

Ի՞նչն անակնկալի բերեց ինձ: Սովորողների հետաքրքրվածությունը, և տարբեր մեկնաբանությունները թեմայի շուրջ:

Ինչը՞ պլանավորածի պես չստացվեց: Դասը ամբողջությամբ բացատրեցի, սակայն խմբային աշխատանքներից մեկը ռիասցրեցինք, որը կիրականացնենք երկրորդ մասը անցնելուց:

Ինչը՞ կփոխեի: Դասի տևողությունը:

Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից:

Հետաքրքիր տեղեկատվություն ժամանակակից հայ գրողի կյանքի, ստեղծագործության մասին, որը կօգնի գնահատել բարոյական արժեքները:

Հասա՞ արդյոք վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացա:

Դասերի ընթացքում կատարված քննարկումների միջոցով հասկացա, որ այն նպատակը որը ես դրել էի պլանավորման մեջ լիարժեքորեն իրագործել եմ և հասել դրական արդյունքի: Սովորողների ակտիվ մասնակցությունը և ամփոփմանը տված նրանց խելամիտ մեկնաբանություններից պարզ դարձավ, որ դասը իրականացվել է ճիշտ ձևաչափով:

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա աշխատե՞ց:

Ներկայումս մենք ապրում ենք շատ դժվար ժամանակահատվածում, երբ դեռ կրտսեր դպրոցական տարիքից պետք է սովորեցնել օջախի, ընտանիքի կարևորության մասին: Այն ամենակարևոր արժեքներից է մեր արժեհամակարգում,

ու մենք որպես մանկավարժներ սեր տարածենք այդ արժեքների վրա։ Մեր հայրենիքի պաշտպանությունը սկսվում է ընտանիքից, օջախի պահպանումը ու ամրությունը պետության ամրությունն է։ Այսօրվա դասի ժամանակ իմ ուշադրությունը հիմնականում այն գաղափարի վրա էր, որ սովորողները հասկանան օջախի կարևորությունը և նշանակությունը, դասի վերջին ես արդեն հասել էի իմ նպատակին։

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ - ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2։ Հովհաննես Թումանյան «Գետակը»

Ուսուցչի անունը՝ Աննա Բենիամինյան

Դասարան՝ 4-րդ դասարան

Դասի անցկացման ժամանակահատվածը՝ 14.05.2021

Առարկա՝ Մայրենի

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ <<Գետակը>> Հովհաննես Թումանյան

Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը՝

- ✓ Կարդալու տեխնիկայի զարգացում
- ✓ Հոմանիշ բառերի ամրապնդում
- ✓ Ջրի դերը և նշանակությունը մեր կյանքում՝ մարդու, բույսերի, կենդանիների

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ✓ Կրթական՝ հոմանիշ բառերի ամրապնդում,
- ✓ Զարգացնող՝ բառապաշարի հարստացում՝ ափ բառի իմաստի բացատրություն,

- ✓ Դաստիարակչական՝ սովորողների մոտ ձևավորել նպատակասլացություն, ջանասիրություն, աշխատասիրություն

Արժեքային համակարգ

Արժևորել մարդու և բնության փոխհարաբերությունները

Վերջնարդյունքները՝

- Սովորողները պետք է կարողանան արտահայտիչ կարդան բանաստեղծությունը
- Կտիրապետի հոմանիշ բառերից զույգեր կազմելուն
- Պատմել բանաստեղծության կից նկարի բովանդակությունը

ԴԱՍԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- ԳՈՒՍ՝ գիտեմ ուզում եմ սովորեմ սովորել եմ
- «Խաթարված հերթականություն»
- Կշռադատում
- ԳՈՒՍ՝ գիտեմ ուզում եմ սովորեմ սովորել եմ մեթոդը օգտագործելու ենք դասի ամբողջ տևողության ընթացքում 3 փուլերը կիրառելով:

«Խաթարված հերթականություն» այս մեթոդը կիրառելու ենք խմբային աշխատանքի հետ միասին:

Կշռադատում մեթոդի օգնությամբ կպարզենք սովորողները, որ հատցածն են հավանել և արժևորել:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ

- Դասագիրք
- Սպիտակ թղթեր
- Մատիտներ
- Համակարգիչ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1. Կազմակերպչական մաս՝ ներկա- բացակա -2ր
2. Տնային աշխատանքի ստուգում- 5 րոպե
3. Դասի խթանում ՝ ԳՈՒՍ մեթոդով՝ 8 րոպե
4. Դասի իմաստի ընկալում՝ ընթերցել բանաստեղծությունը, բառային աշխատանք՝ կայտառ, բառբառային խոսիք բացատրում ՝ էս-այս, ջաղաց-ջրաղաց, անուշահոտ, հոգնած, ճամփա, դադար, մինչև, գյուղ - 10 րոպե
5. Դերային աշխատանք՝ բանաստեղծությունը կարդում են դերերով՝ տղա և գետակ
6. Ֆիզդադար ՝ 5 րոպե
7. Կշռադատում՝ սովորողը պետք է նկարի այն հատվածը, որը հավանել և տպավորվել է- 5 րոպե
8. Անդրադարձ և գնահատում- կատարում եմ անդրադարձ,տնային աշխատանքի հանձնարարում՝ սովորել անգիր,առաջադրանք 3 էջ 43, ամփոփում դասը,գնահատում եմ հաշվի առնելով աշակետի ներգրավածությունը, ակտիվ մասնակցությունը դասի ժամանակ։

9. ԴԱՍԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՁԵԱԹՈՒՂԹ

10. (Անհրաժեշտ է լրացնել դասից հետո)

11. **Ի՞նչը լավ ստացվեց։** Հետազոտական – փորձարարական դասերի ընթացքում ամեն ինչ լավ է ստացվում, բացթողումներ չեն լինում, շնորհիվ նախապես պլանավորած ծրագրի։
12. **Ի՞նչն անակնկալի բերեց ինձ։** Ժամանակի ճիշտ և ռացիոնալ օգտագործումը
13. **Ինչը՞ պլանավորածի պես չստացվեց։** Դասը ամբողջությամբ բացատրեցի, սակայն եղան տեղեկություններ, որ դարձան տնային հանձնարարություն։
14. **Ինչը՞ կփոխեի։** Տեղեկատվություն տալու ձևաչափը։
15. **Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից։**
16. Հետաքրքիր տեղեկատվություն հայ գրողի կյանք, ստեղծագործության մասին, որը կօգնի գնահատել բարոյական արժեքները։
17. **Հասա՞ արդյոք վերջնարդյունքներին։ Ինչպե՞ս դա իմացա։**
18. Դասերի ընթացքում կատարված քննարկումների միջոցով հասկացա, որ այն նպատակը որը ես դրել էի պլանավորման մեջ լիարժեքորեն իրագործել եմ և

հասել դրական արդյունքի։ Աշակերտների կողմից գրողի անձի մասին հետաքրքրվածությունը հենց այդ մասին էր վկայում։

19. Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում։ Դա աշխատե՞ց։

20. Թումանյանական դասերի օրերին ես հատկապես ուշադրություն էի դարձնում սովորողների հետաքրքրվածության ուղղություններին։ Արդի ժամանակներում փոխվել է բարոյահոգեբանական, բարոյամանկավարժական մտածելակերպը, որի արդյունքում փոխվում է նաև աշակերտնորի աշխարհայացքը և արժեքային համակարգը։ Այն արժեքները, որը մենք վեր հանեցինք դասերի վերլուծության ընթացքում սովորողները գնահատեցին, ընկալեցինք և վստահ եմ, որ հետագայում կօգտագործեն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները՝ վրա է հասնում ոգու սովը:Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին:

Գրականությունը այն եզակի առարկաներից է, որը սովորողի մոտ ձևավորում է բարոյակամային մի շարք հատկանիշներ, արժեքներ և հատկություններ: Գրականության միջոցով կարող ենք դաստիարակել սովորողին, հղկել նրան: Թումանյյանը լինելով հայ գրականության ամենաընթերցվող գրողներից մեր նպատակը նրա ստեղծագործությունների միջոցով սեր ձևավորել սովորողների մոտ դեպի ընթերցանությունը: Պլանավորված դասերի նպատակին հասել ենք լիարժեքորեն ինչի մասին են վկայում, մեր ունեցած ծատ հետաքիքիր դասերը, որոնց սովորողները ՝ ուսոմնական տարբեր մակարդակի առաջադիմություն ունեցող, մասնակցել են հավասարաչափորեն: Համագործակցային մեթոդների կիրառման շնորհիվ մենք հասանք մեր նպատակին: Արդյունքի մասին է նաև խոսում այն փաստը, որ սովորողները բոլորը տնային հանձնարարությունը կատարած էին գալիս: Լինում էին աշակերտներ որոնք նաև լրացուցիչ տեղեկություն էին ներկայացնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՆԱՆ ՑԱՆԿ

1. Բանայա Ի.Ա Հոգեբանական անվտանգության ապահովում կրթական կազմակերպություններում ՍՊ 2006, էջ 288
2. Թոփուզյան Ա.Օ. էջ 25-27
3. Յուրի Ամիրջանյան Մանկավարժություն Երևան 2004 էջ 36-38
4. Абдулаева М.А. Нравственноевоспитание в процессеформированияличностимладшегошкольника // В сборнике: Актуальныезадачипедагогики. 2016. С. 70-72.
5. Выготский Л.С. Кризиссемилет// собр. соч.: В 6 т. М.,1984, Т. 4.
6. ДанилкинаИ.С., Кононова Е.Н. Духовно-нравственноевоспитаниедетеймладшегошкольноговозраста //В сборнике: Наука и образование: векторыразвитиямеждународнаянаучно-практическаяконференция. 2017. – С. 42-43.
7. Здор А. В. Возрастныеособенноститемпераментамладшихшкольников // Научно-методическийэлектронныйжурнал «Концепт». 2017. Т. 39. С. 1496–1500.
8. Избранныеработы. М.: Издательскийдом «Территориябудущего», 2005. 496

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ԴԱՍԱՊԼԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Աննա Բենիամինյան

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ	18. 04. 2022	Կիսամյակ	2-րդ	Դասարան	4-րդ

Թեմա՝ **Սուրեն Վարդեւանյան «Օջախի հիմքը»**

Օգտագործվող նյութեր գրատախտակ, դասագիրք, տետր

Դասի նպատակը	1. Ընդլայնել և խորացնել հայ գրողների մասին գիտելիքները 2. Խոսել արդարության մասին 3. Զարգացնել օջախի մասին 4. սովորողների մեջ մեծացնել առարկայի հանդեպ հետաքրքրությունը
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները	Սովորողները արտահայտիչ կընթերցեն տեքստը Կկարողանա պարզ բառապաշարով ներկայացնել տեքստի բովանդակությունը Կարողանան գրել և բացատրել տեքստից հոմանիշ և հականիշ բառերը Կտիրապետեն արտահայտիչ կարդալու կարողությանը Կպատասխանեն տեքստին կից հարցերին Կգիտակցի դասի բովանդակությունը

Գործողություններ (ժամ-տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
7 րոպե		Կազմակերպչական մաս՝ ներկա- բացակա -2ր. Դասի խթանում՝ մտագրոհ մեթոդով բացատրել ի՞նչ է տարիքային տարբերությունը, 5 րոպե		Մտագրոհ Կշռադատում

20 րոպե	**Սովորողները լսում են տեքստը**, անհասկանալի հատվածները քննարկում ուուցչի հետ	**Դասի իմաստի ընկալում** - ուսուցիչը կարդում է տեքստը, սովորողների մոտ նոր նյութի վրա ուշադրության կենտրոնացման համար տալիս է դասի վերաբերյալ հարցեր		
5րոպե			Բառային աշխատանք	Т -ձև մեթոդ
5 րոպե		Կշռադատում- ամփոփում Տնային աշխատանքի հանձնարարում		
5 րոպե	Գնահատում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում գործող միավորային ձևով			

ԴԱՍԱՊԼԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Աննա Բենիամինյան

	Մայրենի	Ամսաթիվ	14. 05. 2022	Կիսամյակ	2-րդ	Դասարան	4-րդ
Թեմա՝ **Հովհաննես Թումանյան «Գետակը»**							
Օգտագործվող նյութեր գրատախտակ, դասագիրք, տետր							
Դասի նպատակը	1. Կարդալու տեխնիկայի զարգացում 2. Կարողանա կռահել ո՞ւմ մեջ է տեղի ունենում երկխոսությունը 3. Կարողանա իր կենսափորձից եզրահանգում կատարել, թե ինչ կլինի, եթե բույսերը չջրվեն, կ կենդանիները ջուր չխմեն						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	✦ Սովորողները արտահայտիչ կընթերցեն տեքստը և իրենց հավանած հատվածը անգ կսովորեն ✦ Կկարողանա պարզ բառապաշարով ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը						

	Կարողանան գրել և բացատրել տեքստից հոմանիշ և հականիշ բառերը Կտիրապետեն արտահայտիչ կարդալու կարողությանը Կպատասխանեն տեքստին կից հարցերին Կգիտակցի դասի բովանդակությունը			
Գործողություններ (ժամ-տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
7 րոպե		Կազմակերպչական մաս՝ ներկա- բացակա -2ր. Դասի խթանում՝ մտագրոհ մեթոդով բացատրել ի՞նչ է գետակը, 5 րոպե		Տ -ձև մեթոդ Կշռադատում
20 րոպե	Սովորողները լսում են բանաստեղծությունը, անհասկանալի հատվածները քննարկում ուուցչի հետ	Դասի իմաստի ընկալում - ուսուցիչը կարդում է բանաստեղծությունը, սովորողների մոտ նոր նյութի վրա ուշադրության կենտրոնացման համար տալիս է դասի վերաբերյալ հարցեր		Մտագրոհ
5րոպե			Բառային աշխատանք	
5 րոպե		Կշռադատում- ամփոփում Տնային աշխատանքի հանձնարարում		
5 րոպե		Գնահատում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում գործող միավորային ձևով		